չփոխեց հայ հայրենասիրական պոեզիայի ռոմանտիկական ուղղությունը, թեև նա էլ իր անզուսպ երևակայությամբ «ամեն ինչ կը հսկայացնե», այնուամենայնիվ, հայրենասիրական երգը նրա ստեղծագործության մեջ ազատվում է մերկապարանոց հրապարակախոսական քարոզից, դառնում է խորապես քնարական ու ներշնչված բանաստեղծական ապրումի արտահայտություն:

Ասուլիսում կենտրոնական տեղը զբաղեցնում է Դանիել Վարուժանի բանախոսությունը: Վարուժանի կարդացած բանախոսությունը սիամանթոյագիտության ամենափայլուն էջերից է, որ այսօր էլ պահպանում է իր գիտական նշանակությունը: Ուրվագծելով այն միջավայրի պատկերը, ուր հասունացել էր Սիամանթոյի տաղանդը, բանախոսը ներկայացնում է արևմտահայ բանաստեղծության վիճակը՝ նրա հրապարակ գալու պահին. «Նույն ահեղ օրերուն հայ բանաստեղծական գրականությունը նախանձելի ոչինչ ուներ: Հիները գացեր կամ քաշվեր էին: Պ. Դուրյանի, Պեշիկթաշլյանի և Թերզյանի քնարներուն վերջին շեշտերը հազիվ կը լեցնեին մեր հոգիները, Ալիշանեն ծիրանափայլ մեծ ստվեր էր մնացեր միայն, որուն տակ կրնային քիչ մը երազել մեր հոգիները՝ գալիք լավագույն քերթողներու հույսին կառչած: Կային նորերը, ոչ միշտ անտաղանդ, բայց կքած բռնակալության թաթին տակ, կ'երգեին միայն կինը, բայց ոչ այն կինը, որ իմաստն է կյանքին քանդող ու ստեղծող ուժերուն, կինը բավղային հոգով, սրտերու դավադիր, ճակատներու նվաճող, կամ այն կինը, որ մայր է միանգամայն: Ոյուպենսյան ներուժ կազմով, արյունով, կենսավետ, որուն լայնալիճ կողերուն մեջ կ'արգասավորին նոր կյանքեր նոր ապագաներով: *Էակի պահպանման* արվեստը պիտի ըլլար այս, լավագույն արվեստը գուցե հանուն կյանքին: Բայց այդ օրերուն երգած կինը պուպրիկ մըն էր, որուն այտերը որդան կարմիր քսեցին քիչ մը, ու զգվեցին զայն, օրորեցին երկա՛ր, երկա՛ր, քնարի օրորներով»:

Վարուժանի այս տողերը ևս հաճախ են վկայակոչվում գրականագետների կողմից ամեն անգամ, երբ հարկ է լինում հաստատել, թե Սիամանթոյի ասպարեզ իջնելու պահին արևմտահայ պոեզիայում իրոք լիակատար անկում էր տիրում: Մեծ բանաստեղծն իսկապես ակնարկում է այդպիսի անկման մասին: Բայց նրա ակնարկը չպետք է հասկանալ բացարձակ իմաստով: Նախ՝ Վարուժանը տարբեր առիթներով խոսում է Սիպիլի, Զրաքյանի, Մեծարենցի ստեղծագործության մասին՝ իբրև ուշադրության